ԿԱՐԾԻՔ

Գոհար Բերկայի Երիցյանի «Ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականներին տրամադրվող մանկավարժական աջակցության ուղիները» խորագրով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված ԺԳ. 00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Այսօր կրթությունը ընդունվում է որպես մարդու, հասարակության և պետության զարգացման գործընթացում առաջընթաց ապահովող չափանիշային համակարգի առանցքային բաղադրիչ: 2023 թվականից փոխվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության որոշումները և հանրակրթության պետական չափորոշչի ներդրմամբ պայմանավորված՝ փոխվել է նաև սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման կարգը, առարկայական չափորոշիչներն ու ծրագրերը, ուստի անհրաժեշտ է վերանայել կրթության ոլորտում կրթական ռազմավարության հարցերը, որոնք այսօր դառնում են առավել կարևոր և բազմաթիվ առումներով ապահովում ազգային կրթության համակարգի գործառնության ամբողջական հաջողությունը :

Եվ այս համատեքստում ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականների առաջադիմության բարելավման և դրա պատճառների բացահայտման հիմնախնդիրը չափազանց կարևոր է՝ այսօր հանրակրթության նոր չափորոշչի հիմնական դրույթների, գնահատման նոր համակարգի իրագործման համատեքստում: Ընդ որում հիմնախնդիրը գրեթե ուսումնասիրված չէ, և առկա են բազմաթիվ հակասություններ տվյալ ոլորտում:

Սույն ատենախոսությունը նվիրված է գնահատման նոր համակարգի պայմաններում, ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականների հիմնախնդրի լուսաբանմանը :

Հեղինակն իր «Ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականներին տրամադրվող մանկավարժական աջակցության ուղիները» խորագրով ատենախոսության մեջ ներկայացրել է կրտսեր դպրոցականների առաջադիմության գործընթացը և դրա վրա ազդող գործոնները: Ուսումնասիրել և վեր են լուծվել սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման նոր կարգը, բացահայտվել կրտսեր դպրոցականի կրթական կարիքները, բացահայտվել են ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրելու մանկավարժահոգեբանական պատճառները և այդ համատեքստում առաջադրվել մանկավարժական աջակցության ուղիներ:

Գնահատելի է, որ սույն հետազոտության բնագավառն իրապես նոր է, խնդիրները հիմնավոր, հետազոտության շրջանակները՝ կոնկրետ: Գոհար

Երիցյանի ատենախոսության թեմայի «Ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականներին տրամադրվող մանկավարժական աջակցության ուղիները» ընտրությունը համահունչ է մանկավարժական գիտության զարգացման միտումներին: Եթե հաշվի առնենք նաև վերջին տասնամյակում հանրակրթական դպրոցներում մանկավարժական գործընթացի կատարելագործման տեմպերը, քննարկվող հարցերն ու հիմնախնդրի շրջանակները, ապա թեմայի արդիականությունը և հրատապությունը հիմնավորվում են անմիջապես:

Միաժամանակ գովելի է ատենախոսի մասնագիտական մոտեցումները և սկզբունքայնությունը հետազոտության շրջանակների ընտրության հարցում: Ատենախոսը հետազոտվող հարցի տեսական հիմքերը ներկայացրել է մասնագիտական գրականության վերլուծության զուգընթաց, ձևավորել վարկած, դուրս բերել հիմնախնդիրները, որոնց լուծումները տրված են հետազոտության մեջ: Գոհար Երիցյանն ուսումնասիրել է մեծ քանակությամբ գրականություն՝ 112 անուն գիտական աղբյուր, դուրս է բերել դրույթները, որոնց հիման վրա, հետզհետե կոնկրետացնելով հարցերն ու նեղացնելով շրջանակները, ձևավորել է հետազոտության հիմնական դրույթները:

Ներածության մեջ բավականին հստակ է ձևակերպված նպատակը, խնդիրները, օբյեկտն ու առարկան, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները: Ատենախոսության և՛ կառուցվածքը և՛ բովանդակությունը հաստատում են, որ ատենախոսը ճիշտ է ընտրել հետազոտության մեթոդաբանական և տեսական հիմքերը: Ատենախոսության և՛ լեզու և՛ ոճը համապատասխանում են գիտական հետազոտության առաջադրվող հիմնական պահանջներին:

Գոհար Երիցյանն իր « Ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականներին տրամադրվող մանկավարժական աջակցության ուղիները» խորագրով աշխատանքում բավականին խորությամբ ուսումնասիրել և վեր է հանել կրտսեր դպրոցականի ուսումնառության ցածր արդյունքների պատճառները՝ ուսումնառության արդյունքների գնահատման նոր համակարգի ներդրման պայմաններում, մշակել է ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականին տրամադրվող մանկավարժական աջակցության ուղիներ: Աշխատանքնում հանգամանալից ներկայացված են դպրոց-ընտանիք համագործակցությունը, երկարօրյա ուսուցումը, տարբերակված ուսուցումը, կրթական ռեսուրսների ներդնումը և մշտադիտարկումը՝ որպես մանկավարժական աջակցության ուղիներ: Գովելի են հատկապես ատենախոսի անձնական ներդրումը ներառող կրթական նյութերը՝ էլեկտրոնային «Խոսող գրքեր», «Տարամակարդակ առաջադրանքներով, հանձնարարություններով, թեմատիկ նյութերով աշխատանքային տետրեր», որոնք հետազոտության հիմնախնդրի տեսանկյունից մեծ ներուժ ունեն:

Գովելի է, որ սույն հետազոտության շրջանակներում նորովի է մեկնաբանվել և վեր է լուծվել «ուսումնական դժվարություն» հասկացությունը. այն է՝ «Աշակերտի կարողունակությունների ձևավորման մակարդակի անհամապատասխանություն առարկայական չափորոշչային պահանջներին»:

Ատենախոսը տիրապետելով բնագավառի գիտական նորույթներին և մշակումներին՝ կարողացել է գիտական պատշաճ մակարդակով գնահատել ոլորտում առկա իրավիճակը, իրավիճակի օբյեկտիվ գնահատման արդյունքում բացահայտել է ոլորտում առկա հակասությունները, թերություններն ու բացերը և իր տեսանկյունից ներկայացրել դրանցից ամենացայտուններն ու հիմնարարները:

Դրվատանքի է արժանի նաև այն, որ Գոհար Երիցյանը համակողմանիորեն ուսումնասիրել և ներկայացրել է մանկավարժական կրթության հիմնական միտումներ. հետազոտության նյութերը հետաքրքիր են ոչ միայն տվյալ թեմայի շրջանակներում, այլև առհասարակ կրթական գործընթացի տարբեր կարողությունների չափման, ստուգման, գնահատման առումով, ինչը նորույթ է, և կարծում ենք , որ գործնական զգալի աջակցություն կլինի ուսուցիչների համար: Բավականին հարուստ և գիտական խորը վերլուծություններով է աչքի ընկնում Գոհար Երիցյանի աշխատանքի հետազոտական մասը:

Հետազոտությունն իրականացվել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հ. 2 , Երևանի «Վարդանանց ասպետներ» հ. 106 հիմնական և Արագածոտնի մարզի Հարթավան գյուղի միջնակարգ դպրոցներում՝ վերը նշված երեք դպրոցների 3 -րդ և 4-րդ դասարանների թվով 473 աշակերտների շրջանում: Հեղինակն էմպիրիկ արդյունքների, օրենսդրության ուսումնասիրության, վիճակագրության ուսումնասիրության և վերլուծության տվյալների հիման վրա, տարբեր մակարդակներում, հաջողված բովանդակային ձևաչափով, ականացրել է ծանրակշիռ հետազոտություն:

Ատենախոսության մեջ ակնհայտ են հեղինակի հետազոտական և մասնագիտական կարողությունները, անձնական ներդրումը կրթական ռեսուրսների մշակման ոլորտում: Դրանք հավաստի են դարձնում հետազոտության արդյունքների արժանահավատությունն ու հիմնավորվածությունը, մանավանդ որ տևական ժամանակ կիրառվել են տարրական դպրոցի կրթական գործընթացում և ունեցել արդյունավետության բարձր ցուցանիշներ:

Ատենախոսությունն ամբողջական, ինքնուրույն, արդիական հնչեղություն ունեցող տեսական և կիրառական հետազոտություն է, որն արտացոլում է հեղինակի հոգեբանամանկավարժական, մասնագիտական գիտելիքները, գիտահետազոտական ինքնուրույն աշխատանք կատարելու կարողությունները, հետազոտական ունակությունները:

Հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել՝ կրթական քաղաքականություն իրականացնողների, կրթական ծրագրերի մշակման գործընթացներում, նաև ուսումնամեթոդական ձեռնարկների մշակման աշխատանքներում, ինչպես նաև կարող են ներդրվել ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման և գիտահետազոտական աշխատանքներում:

Հետազոտության շարադրանքում տրամաբանական հաջորդականությամբ լուծված են նպատակով պայմանավորված խնդիրները, ապացուցված են հիմնադրույթները, հիմնավորված է գիտական նորույթն ու հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսությունը զերծ չէ նաև որոշ թերություններից.

1.Առաջարկում ենք աշխանանքի հետազոտական հատվածը թեթևացնել աղյուսակներից և տրամագրերից, չնայած, որ դրանք հարստացնում և ավելի տեսանելի են դարձնում հետազոտությունը, սակայն դրանք կարծես ծանրացնում են աշխատանքը:

2. Լավ կլիներ, եթե ենթագլուխների եզրակացություններն ավելի ընդգրկուն լինեին:

3.Որոշ ձևակերպումներ, բառակապակցություններ երկարաշունչ են. դրանք վերանայման, հստակեցման և խմբագրման կարիք ունեն. / էջ 16, 20, 27, 48, 65, 66 և այլն /:

Սակայն նշված թերություններն էական չեն և չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժեքը:

Եզրակացություն

Գոհար Բերկայի Երիցյանը . միանշանակ . իրականացրել է լուրջ. ինքնուրույն գիտական հետազոտություն: Նրա « Ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականներին տրամադրվող մանկավարժական աջակցության ուղիները» խորագրով ատենախոսությունն ավարտուն գիտական ուսումնասիրություն է և համապատասխանում է մանկավարժական գիտությունների թեկնածուի աստիճանին ներկայացվող ՀՀ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանների շնորհման կանոնակարգի 7 – րդ կետի պահանջներին. իսկ հեղինակն արժանի է իր կողմից հայցած

մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈՑԵՆՏ ԱՆՆԱ ՄԻՆԱՍՅԱՆ

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Աննա Մինասյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐՏ. ՔԱՐՏՈՒՂԱՐ,